ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

2022թ. սեպտեմբերի 28-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Google Classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին տեղեկատվություն (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) /զեկուցողներ ամբիոնի դասախոսներ/,
2. Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում/զեկուցողներ ամբիոնի դասախոսներ/,
3. 2022-2023թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցի հաստատման մասին,
4. 2022-2023թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների ներկայացում և հաստատում/զեկուցողներ ամբիոնի դասախոսներ/,
5. Կենսաբանություն և քիմիա մասնագիտությունների գծով նոր կրթական ծրագրերի սահմանված կարգով լիցենզավորման գործընթացի կազմակերպման համար միջոցառումներ,
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13 (տասներեք) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում առկա համակարգում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց մշտադիտարկման արդյունքները: Ս.Պիպոյանը խնդրեց դասախոսներին շտկել արձանագրված թերացումները: Համապատասխանեցնել ժամաքանակները ուսումնական պլանին, խմբագրել թեմատիկ տրոհումը՝ համապատասխանեցնելով բուհի մասնագիտական ուղվածությանը: Ամբիոնի վարիչը հիշեցրեց, որ յուրաքանչյուր ամսվա 28-30-ը կատարվելու է էլ. հարթակի մշտադիտարկում:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

2.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը 2022-2023 ուսումնական տարվա ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից նախատեսված թեմաների վերնագրերը: Ներկայացված վերնագրերում կատարվեցին որոշակի փոփոխություններ: Քանի որ որոշ թեմաները հստակեցված չէին, ամբիոնի վարիչը հանձնարարեց մինչև սույն թվականի սեպտեմբերի 29-ը՝ աշխատանքային օրվա ավարտը ներկայացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հստակեցված տարբերակը: (թեմաները կցվում է)

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

3.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի դասախոսների փոխադարձ դասալսումների անհրաժեշտության մասին: Ամբիոնի վարիչը հայտնեց, որ յուրաքանչյուր դասալսման արդյունք պետք է գրանցվի դասալսումների գրանցամատյանում: Ս.Պիպոյանը ներկայացրեց դասալսումների ժամանակացույցը: (ժամանակացույցը կցվում է)

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

4. Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2022-2023թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների հաստատման մասին: (թեմաները կցվում է)

Ս.Պիպոյանը նշեց, որ թեմաներ առաջադրելիս հարկավոր է հաշվի առնել, որ դրանք հետագայում հիմք հանդիսանան դիպլոմային աշխատանքների համար:

Արտահայտվեցին՝

Ն. Կնյազյանը:

Որոշեցին՝

Հաստատել:

5. Լսեցին՝

Ս. Պիպոյանը հաղորդեց, որ ԿԳՄՄՆ նախարարությունը հաստատել է ՀՊՄՀ-ում բակալավրի կրթակամ ծրագրում կենսաբանություն-քիմիա մասնագիտության ներդրման մասին: Ուստի տվյալ մասնագիտության համար անհրաժեշտ է սեղմ ժամկետներում կազմել ուսումնական պլան և համապատասխան առարկայական նկարագրեր:

Ամբիոնի վարիչը հանձնարարեց Մ. Երիցյանին նեկայացնել քիմիայի բնագավառի առարկաների այն ժամաքանակը և առարկաները, որը կենսաբանություն-քիմիա որակավորում ունեցող մասնագետը պետք է անցնի՝ հիմք ընդունելով դպրոցում դասավանդվող թեմաները:

Արտահայտվեցին՝

Վ. Հովսեփյանը, Մ. Երիցյանը, Տ. Թանգամյանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

2022թ. հոկտեմբերի 31-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Դասախոսների հաղորդումը ուսանողների պարտքերի մարման մասին
2. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ մեթոդիստների զեկուցում
3. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 10 (տաս) անդամ:

1.Լսեցին՝

Դասախոսների հաղորդումն 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում պարտք ունեցող ուսանողների մասին: Դասախոսները նշեցին, որ որևէ խնդիր չի եղել քննությունների ժամանակ: Լուծարքային փուլը դեռևս շարունակվում է:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2.Լսեցին՝

Ամբիոնի դասախոսներ Մ.Դալլաքյանի, Ն. Հարությունյանի, Ա. Բաբախանյանի և ֆակուլտետի առկա ուսուցման բաժնի պրակտիկայի ղեկավար Ռ. Սիմոնյանի հաղորդումները՝ մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ու իրականացման արդյունքների, ընթացքում ծագած հարցերի և խնդիրների վերաբերյալ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

2022թ. նոյեմբերի 15-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի հայցորդ Խաչիկյան Անուշի «Նախագծերի մեթոդը որպես սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիա՝ քիմիայի դպրոցական դասընթացում» թեկնածուական ատենախոսության քննարկում /աշխատանքին կարելի է ծանոթանալ ամբիոնում/:
2. Տեղեկատվություն առկա և հեռակա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/:
3. Ամբիոնում առկա նյութատեխնիկական բազայի մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1.Լսեցին՝

Ա. Խաչիկյանը ներկայացրեց «Նախագծերի մեթոդը որպես սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիա՝ քիմիայի դպրոցական դասընթացում» թեմայով ատենախոսությունը:

Աշխատանքի ներկայացումից հետո Ս.Պիոյանը հաղորդեց Լ. Նազարյանի կողմից տրված կարծիքը, իսկ Տ. Թանգամյանը՝ իր կողմից ներկայացված կարծիքը:

Ուլորտի մասնագետները նշեցին իրենց կողմից կատարված նկատառումները աշխատանքի վերաբերյալ, հնչեցվեցին հարցեր, ծավալվեցին մասնագիտական քննարկումներ:Առաջարկվեց կատարել տեխնիկական և բովանդակային փոփոխություններ և լրացումներ:

Որոշեցին՝

Շտկել այն թերացումները, որոնք ներկայացվել են կարծիքներում:

2.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը 2022-2023 ուսումնական տարվա ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից նախատեսված թեմաների վերնագրերը: Ներկայացված վերնագրերում կապված վերաբաշխման հետ կատարվել էին որոշակի փոփոխություններ (թեմաները կցվում է):

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3.Լսեցին՝

Ամբիոնի մասնագետ Դ. Անիկյանը հաղորդեց ամբիոնում առկա այն սարքավորումների գույքացուցակը, որը անհրաժեշտ է դուրս գրել 2022-2023 ուսումնական տարում:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

2022թ. նոյեմբերի 30-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի հայցորդների և ասպիրանտի ատեստավորում /հայցորդներ, ասպիրանտ/
2. Հաշվետվություն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վրա կատարվող աշխատանքների մասին /ամբիոնի դասախոսներ/
3. Մանկավարժական պրակտիկայի մեթոդիստ-ղեկավարների հաղորդում պրակտիկայի ընթացքի մասին /ամբիոնի դասախոսներ/
4. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 9 (ինը) անդամ:

1.Լսեցին՝

Ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Հակոբյանի հաշվետվությունը 2022թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Ս. Պիպոյանը, Տ. Թանգամյանը, Ա. Բաբախանյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Լիլիթ Հակոբյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 9

Դեմ՝ 0

Չեռնպահ՝ 0

Լսեցին՝

Ամբիոնի հայցորդ Նարինե Ստեփանյանի հաշվետվությունը 2022թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Ս. Պիպոյանը, Տ.Թանգամյանը, Ն. Հարությունյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Նարինե Ստեփանյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 9

Դեմ՝ 0

Չեռնպահ՝ 0

Լսեցին՝

Ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանի հաշվետվությունը 2022թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Ս. Պիպոյանը, Տ. Թանգամյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Անուշ Խաչիկյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 9

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Լսեցին՝

Ամբիոնի հայցորդ Ելենա Ամիրյանի հաշվետվությունը 2022թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Ս. Պիպոյանը, Տ. Թանգամյան, Ն. Կնյազյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Ելենա Ամիրյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 9

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Լսեցին՝

Ամբիոնի հայցորդ Արմենուհի Փիլթակյանի հաշվետվությունը 2022թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Ս. Պիպոյանը, Ն. Կնյազյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Արմենուհի Փիլթակյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 9

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

2.Լսեցին՝

Ամբիոնի դասախոսների հաղորդումը ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վրա կատարվող աշխատանքների մասին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3.Լսեցին՝

Ամբիոնի դասախոսների հաղորդումները մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ու իրականացման արդյունքների, ընթացքում ծագած հարցերի և խնդիրների վերաբերյալ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

2022թ. դեկտեմբերի 30-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Հեռակա ուսուցման նախապատրաստական աշխատանքների մասին
2. Ամբիոնի դասախոսների հաղորդումը մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին
3. Դասալսումների արդյունքների քննարկում
4. 1-ին կիսամյակում մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների ամփոփում
5. Google Classroom էլեկտրոնային հարթակում 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների ամփոփում
6. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ) անդամ:

1.Լսեցին՝

Ամբիոնի դասախոսների հաղորդումները 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցման 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի առկայության մասին: Քննարկվեց դրանց համապատասխանեցումը ներկայացվող պահանջներին: Հանձնարարվեց վերանայել վերոնշյալ փաստաթղթերն առաջիկա ամսվա ընթացքում:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

2.Լսեցին՝

Դասախոսների հաղորդումն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող աշխատանքների ընթացքը: Նշվեց, որ ներկայում ուսանողներն աշխատում են փորձարարական մասի վրա, և աշխատանքներն ըստ էության ընթանում են նախատեսված պլանի համաձայն:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3.Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի փոխադարձ դասալսումների արդյունքների մասին: Ներկայացվեց այն դիտարկումները, որոնք կատարվել են դասալսումների ընթացքում: Հանձնարարվեց առանձին դասախոսների շտկել նկատված թերությունները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4.Լսեցին՝

Պրակտիկայի մեթոդիստների և ֆակուլտետի առկա ուսուցման բաժնի պրակտիկայի ղեկավար Ռ. Սիմոնյանի հաղորդումները 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսմայակում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ու իրականացման արդյունքների և առկա հիմնախնդիրների մասին: Առաջարկվել են միջոցառումներ դրանք չեզոքացնելու ուղղությամբ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5.Լսեցին՝

Ս. Պիպոյանը հաղորդեց Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին: Հանձնարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորին սեղմ ժամկետներում շտկել առկա խնդիրները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

2023թ. հունվարի 30-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Դասախոսների հաղորդումն առաջին կիսամյակի քննությունների արդյունքների մասին,
2. Ամբիոնի նախապատրաստական աշխատանքները և խնդիրները 2-րդ կիսամյակի վերաբերյալ /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/,
3. 2022-2023 ուսումնական տարվա առկա բակալավրիատի 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների ներկայացում և հաստատում /զեկուցողներ՝ Մ. Դալլաքյան, Ա. Կիրակոսյան, Ռ. Մխիթարյան/,
4. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերի վերաբերյալ /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/,
5. Գիտահետազոտական աշխատանքների մասին /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/,
6. Հաշվետվություն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վրա կատարվող աշխատանքների մասին /տեղեկացնել ամբիոնի դասախոսներին/
7. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15 (տասնհինգ) անդամ:

1.Լսեցին

Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից դասավանդած առարկաների ընթացիկ ստուգումների և ամփոփիչ քննությունների արդյունքների մասին:

Դասախոսները նշեցին, որ հիմնական խնդիրը եղել է ուսանողների քննություններին տարբեր պատճառներով չներկայանալը: Որոշ ուսանողների չներկայանալը և լուծարք մնալը կապված է եղել ուսման վարձը չվճարելու հետ:

Մ. Երիցյանը և Ա. Առուստամյանը նշեցին, որ խնդիրներ առկա են հատկապես «Քիմիա» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողներ Հակոբյան Դիանայի և Պոգոսյան Շալիկոյի մոտ, որոնք չեն կարողանում հաղթահարել բավարար գիտելիքների նվազագույն շեմը:

Դասախոսները նշեցին, որ հիմնական խնդիրը նաև այն է, որ մագիստարատուրայում ուսանողների մեծ մասը ունենալով այլ մասանգիտություն՝ չունեն բազային գիտելիքներ «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաներից:

Ս. Պիպոյանը նշեց, այն ուսանողները, որոնք չեն առաջադիմում մասնագիտական առարկաներից, չնշանակել դրական գնահատական և մեծ ուշադրություն դարձնել կրթական որակին:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն

2.Լսեցին՝

Ամբիոնի վարիչը տեղեկացրեց 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում նախատեսվող աշխատանքների մասին: Հանձնարարվեց մինչև ս.թ. փետրվարի 6-ը Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում տեղադրել դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, ուսումնական նյութերը և հարցաշարերը:
Քննարկվեցին դրանց համապատասխանեցման ներկայացվող պահանջները:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն

3.Լսեցին՝

Մ. Դալլաքյանը, Ա. Կիրակոսյանը, Ռ. Մխիթարյանը հաղորդեցին 2022-2023թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաները: (Կցվում է)

Ս.Պիպոյանը նշեց, որ Ա. Կիրակոսյանի և Ռ. Մխիթարյանի մոտ թեմաները ներկայացված են շատ ընդհանուր: Ամբիոնի վարիչը նշեց, որ թեմաները առաջադրելիս հարկավոր է հաշվի առնել, որ դրանք հետագայում հիմք հանդիսանան դիպլոմային աշխատանքների համար: Հանձնարարվեց վերանայել և ներկայացնել վերջնական տարբերակները:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն

4. Լսեցին՝

2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգումների և բանավոր քննությունների հարցաշարերը:

Որոշեցին՝

Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ և բանավոր քննությունների հարցաշարերը:

5. Լսեցին՝

Ամբիոնի դասախոսների կողմից գիտամեթոդական աշխատանքների իրականացման մասին: Դասախոսները ներկայացրեցին 2022 թվականի ընթացքում իրենց կողմից հրատարակած և տպագրության ուղարկված գիտական աշխատանքները: (Ցուցակը կցվում է):

Ս. Պիպոյանը նշեց, որ գիտահետազոտական աշխատանքների նվազ լինելը կապված է նաև բուհում մասնագիտացված լաբորատորիաներում նյութատեխնիկական հագեցվածության պակասի հետ: Դասախոսները հնարավորության դեպքում իրենց

գիտական հետազոտությունները կատարում են այլ բուհերում կամ գիտահետազոտական կենտրոններում:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն

6. Լսեցին՝

Դասախոսների հաղորդումն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող աշխատանքների ընթացքը:

Ս. Պիպոյանը հանձնարարեց դասախոսներին, որ մեկ շաբաթվա ընթացքում գրավոր կերպով ներկայացնեն հաշվետվություն իրենց կողմից ղեկավարվող ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի մասին:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն

7. Լսեցին՝

Ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանի հաղորդումը «Կենսաբանություն» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի Հերմինե Լազարյանի 24.01.2023թ. դիմումի համաձայն ավարտական աշխատանքի նոր թեմայի ընտրության և ղեկավար նշանակելու վերաբերյալ:

Արտահայտվեցին՝

Մ. Երիցյանը, Ն. Կնյազյանը, Վ. Հովսեփյանը, որոնք կարծիք հայտնեցին ավարտական նոր թեմա տրամադրելու և ղեկավար նշանակելու վերաբերյալ և համարեցին այն ժամանակավրեպ, քանի որ 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակում հնարավոր չէ կատարել հետազոտական աշխատանքներ և դրանց վերլուծական աշխատանքներ՝ անբավարար ժամանակի պատճառով, ինչպես նաև պատրաստել ավարտական աշխատանք ներկայացվող պահանջներին համապատասխան:

Որոշեցին՝

«Կենսաբանություն» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի Հերմինե Լազարյանի ավարտական աշխատանքի նոր թեմայի ընտրությունը համարել ժամանակավրեպ և ոչ նպատակահարմար, քանի որ ուսանողը ի զորու չէ նշված սեղմ ժամանակահատվածում ապահովել բավարար արդյունք:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N7

2023թ. փետրվարի 9-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Նոր պահանջներին համապատասխան առարկաների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումներ կազմում,
2. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ) անդամ:

1.Լսեցին՝

Ամբիոնի դասախոսների հաղորդումները 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի առկայության մասին: Քննարկվեց դրանց համապատասխանեցումը ներկայացվող պահանջներին:

Ամբիոնի վարիչը ներկայացրեց օրինակելի առարկայական նկարագրի և թեմատիկ տրոհման հիման վրա իր կողմից կենդանաբանություն առարկայի համար կազմված նմուշը: Ներկայացվեց, թե ինչ կետերի վրա հատկապես պետք է ուշադրություն դարձնի դասախոսը իր կողմից դասավանդվող առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները կազմելու համար:

Հանձնարարվեց պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորին սեղմ ժամկետներում շտկել առկա խնդիրները:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N8

2023թ. մարտի 2-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ս. Պիպոյանի հաղորդումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի «Միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը սահմանելու մասին» թիվ 39-Ն հրամանով սահմանված միջոցառման իրականացման մասին,
2. Հաշվետվություն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վրա կատարվող աշխատանքների մասին /ամբիոնի դասախոսներ/,
3. Google Classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին տեղեկատվություն (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) /զեկուցողներ ամբիոնի դասախոսներ/,
4. Առկա ուսուցման համակարգում բակալավրիատի և մագիստրատուրայի լուծարքների արդյունքների մասին,
5. 2022-2023թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցի հաստատման մասին,
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1.Լսեցին

Ս. Պիպոյանի հաղորդումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի «Միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը սահմանելու մասին» թիվ 39-Ն հրամանով սահմանված միջոցառման իրականացման մասին: Ս. Պիպոյանը նշեց, որ հաշվի առնելով փաստաթղթում ներկայացվող առաջարկները, անհրաժեշտ է ուսումնասիրել դպրոցական դասագրքերը և գործող չափորոշիչները, որի հիման վրա դասախոսները իրենց մասնագիտական ուղղվածության շրջանակում պետք է ներկայացնեն այն նվազագույն գիտելիքների և կարողությունների պահանջները, որոնք պետք է ունենա աշակերտը ՀՊՄՀ-ի «Կենսաբանություն» կամ «Քիմիա» բաժին ընդունվելու համար:

Ս. Պիպոյանը հանձնարարեց դասախոսներին մինչ սույն թվականի հուլիսի 1-ը ներկայացնել համապատասխան առաջարկությունները:

Արտահայտվեցին՝

Տ. Թանգամյանը, Մ. Երիցյանը, Ա. Առուստամյանը, Ռ. Սիմոնյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

Ընդունել ի կատարումն:

2.Լսեցին

Դասախոսների հաղորդումն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող աշխատանքների ընթացքը:

Նշվեց, որ ներկայում ուսանողներն աշխատում են փորձարարական մասի վրա, և աշխատանքներն ըստ էության ընթանում են նախատեսված պլանի համաձայն:

Մ. Երիցյանը և Ա. Առուստամյանը նշեցին, որ խնդիրներ առկա են «Քիմիա» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողներ Հակոբյան Դիանայի և Պոգոսյան Շալիկոյի մոտ, որոնք չեն համագործակցում իրենց ղեկավարների հետ և դրա արդյունքում մագիստրոսական ներկայացված աշխատանքները չեն իրականացվում:

Ս.Պիպոյանի կողմից նաև հնչեց առաջարկություն, որ եթե ուսանողները մինչև սույն թվականի ապրիլի 15-ը չեն կատարի իրենց ղեկավարների կողմից ներկայացված պահանջները՝ չերաշխավորել նախապաշտպանության:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

3.Լսեցին

Ս. Պիպոյանը հաղորդեց Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին: Հանձնարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորին սեղմ ժամկետներում շտկել առկա խնդիրները:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

4.Լսեցին

Դասախոսների հաղորդումն առաջին կիսամյակի ընթացքում պարտք ունեցող ուսանողների մասին: Դասախոսները նշեցին, որ որևէ խնդիր չի եղել քննությունների ժամանակ: Լուծարքային փուլն արդեն ավարտվել է:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5.Լսեցին

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնում 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցի հաստատման մասին:

Որոշեցին՝

Հաստատել:

6.Լսեցին

Ա. Կիրակոսյանը ներկայացրեց առաջարկություն, որպեսզի 2-րդ լուծարքային փուլից սկսած ուսանողները որոշակի գումար վճարեն համալսարանին՝ քննություններին մասնակցելու համար:

Որոշեցին՝
Առաջարկությունը ներկայացնել ֆակուլտետի խորհրդի նիստում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N9

2023թ. մարտի 31-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ս. Պիպոյանի հաղորդումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի «Միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը սահմանելու մասին» թիվ 39-Ն հրամանով սահմանված միջոցառման իրականացման մասին,
2. «Կենսաբանություն-քիմիա» մասնագիտության համար առարկայական նկարագրերի և մասնագրի սեղծում,
3. Տեղեկատվություն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վրա կատարվող աշխատանքների մասին /ամբիոնի դասախոսներ/,
4. Google Classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին տեղեկատվություն (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) /զեկուցողներ ամբիոնի դասախոսներ/,
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը:

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13 (տասներեք) անդամ:

1. Լսեցին՝

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի «Միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը սահմանելու մասին» թիվ 39-Ն հրամանի հիման վրա ֆակուլտետի կողմից 08.02.2023թ.-ին սահմանված հանձնարարականի քննարկվեց և որոշվեց ստեղծել հանձնաժողով՝ կազմված ամբիոնի դասախոսներից: Համաձայն դրա՝ հանձնաժողովի անդամները պետք է ուսումնասիրեն հանրակրթական դպրոցի «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաների դասագրքերը և դրանց գործող չափորոշիչները, որի հիման վրա մինչև սույն թվականի ապրիլի 1-ը ամբիոն պետք է ներկայացնեն առաջարկություններ՝ նվազագույն առարկայական գիտելիքների և կարողությունների պահանջների վերաբերյալ («Կենսաբանություն» և «Քիմիա» մասնագիտությունների գծով ընդունվելու համար): Միաժամանակ սահմանվեց, յուրաքանչյուր դասախոսի մասնակցությունը սույն գործընթացին՝ ըստ մասնագիտացման:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

Ընդունել ի կատարումն:

2. Լսեցին՝

Հաշվի առնելով «Կենսաբանություն-քիմիա» նոր մասնագիտության ներդրումը ՀՊՄՀ-ում, ամբիոնի վարիչի կողմից առաջարկվեց ստեղծել այդ մասնագիտության ՄԿԾ-ների

մշակման հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին ամբիոնի աշխատակիցների մեծ մասը: Դասախոսներին հանձնարարվեց նոր ուսումնական պլանի հիման վրա ստեղծել առարկայական նկարագրերը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

Ընդունել ի կատարումն:

3.Լսեցին՝

Դասախոսների հաղորդումն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող աշխատանքների ընթացքը: Նշվեց, որ ներկայում ուսանողներն աշխատում են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերջնական տեսքի բերման վրա, և աշխատանքներն ըստ էության ընթանում են նախատեսված պլանի համաձայն:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4.Լսեցին՝

Քննարկվեց Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքները: Ամբիոնի վարիչը ներկայացրեց դրանց մշտադիտարկման արդյունքները: Հանձնարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորին սեղմ ժամկետներում շտկել առկա խնդիրները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N10
2023թ. ապրիլի 10, 11-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանություն
2. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը:
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանության վերջանական փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի բակալավրիատի թվով 17 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

Առկա բակալավրիատի «Կենսաբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի թվով 14 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության.

- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**
  1. Գաբրիելյան Քրիստինա Ստյոպայի
  2. Գևորգյան Անի Դավիթի
  3. Էվինյան Կարինե Մայիսի
  4. Թորոսյան Անահիտ Արթուրի
  5. Հարությունյան Հայկանուշ Վահանի
  6. Ղազարյան Լարիսա Համլետի
  7. Մացակյան Սաթենիկ Նորայրի
  8. Մնացականյան Աննա Մերուժանի
  9. Մովսիսյան Աննա Վանիկի
  10. Պետրոսյան Մանե Գրիգորի
  11. Սարգսյան Աննա Արամիկի
  12. Սարգսյան Լիլիթ Նվերի
  13. Սարգսյան Մարիամ Անդրանիկի
  14. Վարդանյան Վարդուհի Արայիկի

Թույլատրել Պողոսյան Տիգրանուհուն, Ղամբարյան Աննային և Առաքելյան Սյուզիին մասնակցել ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N11

2023թ. ապրիլի 12-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն

2.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 8 (ութ) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության վերջանական փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության: Ուսանողները ներկայացրենի իրենց աշխատանքները:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի մագիստրատուրայի թվով 6 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 6 ուսանողի մագիստրոսական թեզ թույլատրել հրապարակային պաշտպանության.

- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**
  1. Աբրահամյան Ռոմելլա Աշիկի
  2. Համբարձումյան Քնարիկ Ստեփանի
  3. Մարկոսյան Մարինե Մարտինի
  4. Մարտիրոսյան Բեռտա Արմենի
- ✓ **«Քիմիա» մասնագիտություն**
  1. Ալբերտյան Սիրանուշ Մանուկի
  2. Մեհրաբյան Դոնարա Աշոտի

Թույլատրել Խեչոյան Աստղիկին մասնակցել մագիստրոսական թեզերի նախապաշտպանության երկրորդ փուլին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N12

2023թ. ապրիլի 19-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Ֆակուլտետի դեկանի թեկնածուի առաջադրման մասին

2.2022-2023 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատի 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների ներկայացում և հաստատում

3.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի թեկնածուի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարության և այդ պաշտոնում ամբիոնի աշխատակիցներից մեկի առաջադրման նպատակահարմարության մասին: Առաջադրվեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Սադոյանի թեկնածությունը:

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Տ. Թանգամյանը, Ա. Կիրակոսյանը:

Որոշեցին՝

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսների կարծիքների հիման վրա ֆակուլտետի դեկանի պաշտոնում առաջադրել ամբիոնի դասախոս կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Սադոյանի թեկնածությունը:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 9

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

2. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2022-2023թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի հեռակա բակալավրիատի կուրսային աշխատանքների թեմաների հաստատման մասին: (թեմաները կցվում է)

Որոշեցին՝

Հաստատել:

3. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում առկա համակարգում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց մշտադիտարկման արդյունքները: Ս.Պիպոյանը խնդրեց դասախոսներին շտկել արձանագրված թերացումները: Համապատասխանեցնել ժամաքանակները ուսումնական պլանին, խմբագրել թեմատիկ տրոհումը՝ համապատասխանեցնելով բուհի մասնագիտական ուղվածությանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

4.Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը կենսաբանություն-քիմիա մասնագիտության առարկայական նկարագրերի հաստատման մասին:

Որոշեցին՝

- Հաստատել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N13

2023թ. մայիսի 2-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանություն
2. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 7 (յոթ) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանության վերջանական փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի բակալավրիատի թվով 11 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

Առկա բակալավրիատի «Կենսաբանություն» մասնագիտության 5-րդ կուրսի թվով 7 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության.

- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

Աղայան Լիլիթ Արայիկի

Դարբինյան Արմինե Հովհաննեսի

Թումասյան Ժենյա Արարատի

Հակոբյան Էմմա Սևակի

Համբարձումյան Սրբուհի Սոսիկի

Մխիթարյան Անի Սոսիկի

Ռաշոյան Դիանա Տիգրանի

Թույլատրել Մկրտչյան Զմրուխտին, Սարգսյան Միլենային, Վարդանյան Սրբուհուն և Լազարյան Հերմինեին մասնակցել ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N14

2023թ. մայիսի 3-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Ավարտական աշխատանքների նախապաշտպանություն

2.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 9 (ինը) անդամ:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանության վերջանական փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության:

Ըստ նախօրոք կազմված ժամանակպացույցի բակալավրիատի թվով 7 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

Առկա բակալավրիատի «Քիմիա» մասնագիտության 5-րդ կուրսի թվով 5 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության.

- ✓ **«Քիմիա» մասնագիտություն**

Բարսեղյան Արևիկ Ալեքսանի

Կիրակոսյան Քնարիկ Վանիկի

Հովհաննիսյան Տաթև Սարգսի

Սահակյան Լուսինե Արմենի

Սարոյան Գոհար Խաչիկի

Թույլատրել Շալջյան Ասյային և Հունանյան Անիին մասնակցել ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N15

2023թ. մայիսի 8-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Ավարտական աշխատանքների մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների երկրորդ փուլ

2.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 9 (ինը) անդամ:

Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների երկրորդ փուլը, և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության:

Առկա բակալավրիատի «Կենսաբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի թվով 3 ուսանողներ՝ Պողոսյան Տիգրանուհին, Ղամբարյան Աննան, Առաքելյան Սյուզին և մագիստրատուրա «Կենսաբանություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող՝ Խեչոյան Աստղիկը ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

Առկա բակալավրիատի «Կենսաբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի թվով 17 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության.

«Կենսաբանություն» մասնագիտություն

1. Առաքելյան Սյուզի Հոմերոսի
2. Գաբրիելյան Քրիստինա Ստյոպայի
3. Գևորգյան Անի Դավիթի
4. Էվինյան Կարինե Մայիսի
5. Թորոսյան Անահիտ Արթուրի
6. Հարությունյան Հայկանուշ Վահանի
7. Ղազարյան Լարիսա Համլետի
8. Ղամբարյան Աննա Սերժիկի
9. Մացակյան Սաթենիկ Նորայրի
10. Մնացականյան Աննա Մերուժանի
11. Մովսիսյան Աննա Վանիկի
12. Պետրոսյան Մանե Գրիգորի
13. Պողոսյան Տիգրանուհի Վալենտինի
14. Սարգսյան Աննա Արամիկի
15. Սարգսյան Լիլիթ Նվերի
16. Սարգսյան Մարիամ Անդրանիկի
17. Վարդանյան Վարդուհի Արայիկի

Մագիստրատուրա «Կենսաբանություն» և «Քիմիա» մասնագիտության 2-րդ կուրսի թվով ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության. 7

«Կենսաբանություն» մասնագիտություն

1. Աբրահամյան Ռոմելլա Աշիկի
2. Մարկոսյան Մարինե Մարտինի
3. Մարտիրոսյան Բեռտա Արմենի
4. Խեչոյան Աստղիկ Սերժիկի
5. Համբարձումյան Քնարիկ Ստեփանի

«Քիմիա» մասնագիտություն

1. Ալբերտյան Սիրանուշ Մանուկ
2. Մեհրաբյան Դոնարա Աշոտի

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N16

2023թ. մայիսի 26-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների երկրորդ փուլ

2.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 9 (ինը) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների երկրորդ փուլը, և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության:

Հեռակա բակալավրիատի «Կենսաբանություն» մասնագիտության 5-րդ կուրսի թվով 4 ուսանողներ՝ Մկրտչյան Զմրուխտը, Սարգսյան Միլենան, Վարդանյան Սրբուհին, Լազարյան Հերմինեն և «Քիմիա» մասնագիտության 5-րդ կուրսի թվով 4 ուսանողներ՝ Շալջյան Ասյան և Հունանյան Անին ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

Հեռակա բակալավրիատի «Կենսաբանություն» մասնագիտության 5-րդ կուրսի թվով 9 և «Քիմիա» մասնագիտության 5-րդ կուրսի թվով 6 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության.

- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Աղայան Լիլիթ Արայիկի
2. Թումասյան Ժենյա Արարատի
3. Հակոբյան Էմմա Սևակի
4. Համբարձումյան Սրբուհի Սոսիկի
5. Մխիթարյան Անի Սոսիկի
6. Մկրտչյան Զմրուխտ Արթուրի
7. Ռաշոյան Դիանա Տիգրանի
8. Սարգսյան Միլենա Էդիկի
9. Վարդանյան Սրբուհի Իսրայելի

- ✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Բարսեղյան Արևիկ Ալեքսանի
2. Կիրակոսյան Քնարիկ Վանիկի
3. Հովհաննիսյան Տաթևիկ Սարգսի
4.Շալջյան Ասյա Հակոբի
5.Սահակյան Լուսինե Արմենի
6. Սարոյան Գոհար Խաչիկի

Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի «Կենսաբանություն» մասնագիտության Լազարյան Հերմինեի և «Քիմիա» մասնագիտության Հունանյան Անի ավարտական աշխատանքը չերաշխավորել հրապարակային պաշտպանության:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N17

2023թ. հունիսի 6-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի արդյունքների մասին
2. Տեղանքում կազմակերպվող գործնական աշխատանքների մասի
3. Դասալսումների արդյունքների քննարկում
4. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 8 (ութ) անդամ:

1. Լսեցին՝

Ս. Պիպոյանի հաղորդումն ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման արդյունքում ուսանողների ստացած գնահատականների վիճակագրությունը: Կից ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

Ս. Պիպոյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների հետ կապված խնդիրները.

- Ավարտական աշխատանքները որոշ դեպքերում ձևակերպված էին ոչ ընդունված ձևաչափին համապատասխան, կային քերականական և տեխնիկական սխալներ:
- Ավարտական աշխատանքներում հիմնականում սխալ է ձևակերպված նպատակը և խնդիրները:
- Ավարտական աշխատանքները օբյեկտիվ չեն գնահատվում և հիմնականում մանրամասն չեն ստուգվում գրախոսի կողմից:
- Ավարտական աշխատանքներում օգտագործված էր հին գրականություն:
- Ուշադրություն դարձնել, թե որքանով են դասախոսի կողմից ուսանողին տրվող թեմաները հաղթահարելի տվյալ ուսանողի համար:

ԿՔԱ ֆակուլտետի դեկան Ռ.Սադոյանը հորդորեց դասախոսներին առավել մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության արդիականության վրա՝ կրկնողություններից խուսափել, աշխատանքները ձևակերպել ըստ ընդունված ձևաչափի, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել վիճակագրական տվյալների ստացման և մշակման վրա:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

2. Լսեցին՝

Ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանի հաղորդումը՝ «Կենսաբանություն» առարկայի ուսումնական պրակտիկայի շրջանակներում տեղանքում կազմակերպվող գործնական աշխատանքների հարցի վերաբերյալ:

Արտահայտվեցին՝

Կենս. գիտ. թեկ., դոցենտ՝ Ռ. Սիմոնյանը, կենս. գիտ. թեկ.՝ Մ.Դալլաքյանը և քիմ. գիտ. թեկ., դոցենտ՝ Վ. Հովսեփյանը, ովքեր կարևորեցին ուսուցման որակի բարձրացման գործընթացում, ուսումնական պրակտիկայի շրջանակներում տեղանքում կազմակերպվող գործնական աշխատանքների նշանակությունը և իրականացման անհրաժեշտությունը:

Որոշեցին՝

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ս.թ.հունիսի 6-ի №17 նիստով որոշված առաջարկությունը հիմնավորման տեսքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ: Կից ներկայացվում է հիմնավորումը:

3.Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը դասալսումների արդյունքների մասին: Ս.Պիպոյանը հայտնեց, որ 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասախոսների մեծ մասի կողմից չի կատարվել դասալսումներ ըստ նախատեսված ժամանակացույցի, Ամբիոնի վարիչը հայտնեց, որ փոխադարձ դասալսումները պարտադիր կերպով իրականացնել հեռակա բակալավրիատի 1-4-րդ կուրսերում մինչև ս.թ.-ի հունիս 20-ը:
Ս. Պիպոյանը նշեց, որ դասալսումները շատ կարևոր են փորձի փոխանակման, կրթության որակի բարելավման և դասապրոցեսի կատարելագործման տեսակետից:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N18

2023թ. հուլիսի 4-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքների մասին
2.Ամբիոնի հայցորդ Արմինե Բաղալյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի քննարկում
3.2023-2024 ուսումնական տարվա նախնական ծանրաբեռնվածության մասին
4.Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ. Թանգամյանի կողմից կազմած «Կենսաբանական ինչուներ և պատասխաններ» ուսումնաօժանդակ ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին
5.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1. Լսեցին՝

Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից դասավանդած առարկաների ընթացիկ ստուգումների և ամփոփիչ քննությունների արդյունքների մասին:
Դասախոսները նշեցին, որ որևէ խնդիր չի եղել քննությունների ժամանակ: Որոշ ուսանողներ քննություններին չներկայանալու կամ անցողիկ շեմը չհաղթահարելու պատճառով կմասնակցեն սեպտեմբեր ամսվա լուծարքին:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

2. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնի հայցորդ Արմինե Բաղալյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և ղեկավար նշանակելու վերաբերյալ: Ատենախոսության թեմա առաջարկվեց «Դպրոցամերձ ուսումնափորձնական հողամասերի դերը աշակերտների էկոլոգիական կարողությունների ձևավորման գործում» վերնագիրը, իսկ ղեկավար՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խաչատուրի Պիպոյանը:

Որոշեցին՝

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացնել «Դպրոցամերձ ուսումնափորձնական հողամասերի դերը աշակերտների էկոլոգիական կարողությունների ձևավորման գործում» թեման որպես Արմինե Բաղալյանի ատենախոսության վերնագիր, իսկ գիտական ղեկավար՝

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խաչատուրի Պիպոյանը:

3.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության նախնական տարբերակը: Ամբիոնի վարիչը հայտնեց որ դասաբաշխումը կատարվելու է հաշվի առնելով յուրաքանչյուր դասախոսի մասնագիտական ուղղվածությունը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

4.Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումն առ այն, որ ամբիոնի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր Տ. Թանգամյանը քննարկման է ներկայացրել իր կողմից կազմած «Կենսաբանական ինչուներ և պատասխաններ» ուսումնաօժանդակ ձեռնարկը:

Ս. Պիպոյանը նշեց, որ ձեռնարկի վերաբերյալ գրավոր տրվել են դրական կարծիքներ:

Արտահայտվեցին՝

Մ. Երիցյանը, Ա. Առուստամյանը, Վ. Հովսեփյանը:

Որոշեցին՝

Տ. Թանգամյանի կողմից կազմած «Կենսաբանական ինչուներ և պատասխաններ» ուսումնաօժանդակ ձեռնարկը, երաշխավորել հրատարակման:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 12

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N19

2023թ. օգոստոսի 31-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Դասախոսների բեռնվածությունը նոր ուսումնական տարում
2. Դասախոսների կողմից ուսումնական նյութերի մշակումը և տեղադրումը էլեկտրոնային հարթակում
3. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացիկ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերի վերաբերյալ
4. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընտրովի դասընթացների հաստատում
5. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը նոր ուսումնական տարում դասախոսների բեռնվածության մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց յուրաքանչյուր դասախոսի ժամաքանակն ըստ դասաբաշխման (բեռնվածությունը կցվում է):

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն էլեկտրոնային հարթակում դասախոսների կողմից ուսումնական նյութերի մշակման և տեղադրման մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ նյութերը պետք է տեղադրված լինեն սահմանված ժամկետներում և համապատասխանեն ներկայացվող պահանջներին:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն և մինչև սույն թվականի սեպտեմբերի 7-ն ավարտել ուսումնական նյութերի տեղադրումը էլեկտրոնային հարթակում:
- Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ուսումնական նյութերը:

3. **Լսեցին՝**

Քննարկվեց 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգումների և բանավոր քննությունների հարցաշարերը:

Որոշեցին՝

Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ և բանավոր քննությունների հարցաշարերը:

4. Լսեցին՝

Քննարկվեց 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասախոսների կողմից ներկայացված ընտրովի դասընթացների վերնագրերը:

Որոշեցին՝

Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընտրովի դասընթացների վերնագրերը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ